



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ԷՄԻԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԵՎ ՎԱՀԵ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ (ՈՒԺԸ ԿՈՐՑՐԵԼ Է 15.06.2001 Թ.) 13-ՐԴ ԵՎ 44-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Էմիլյա Գևորգյանի, Էդգար Գևորգյանի և Վահե Գևորգյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ հողային օրենսգրքի (ուժը կորցրել է 15.06.2001 թ.) 13-րդ և 44-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. 2023 թվականի ապրիլի 17-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Էմիլյա Գևորգյանի, Էդգար Գևորգյանի և Վահե Գևորգյանի (այսուհետ՝ Դիմողներ) դիմումը, որով Դիմողները խնդրել են.

«(...) Որոշել ՀՀ Հողային օրենսգրքի (ուժը կորցրել է 15.01.2001 թվականին) 13-րդ հոդվածը ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածին, ՀՀ Հողային օրենսգրքի (ուժը կորցրել է 15.01.2001 թվականին) 44-րդ հոդվածը ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին համապատասխանության հարցը»:

2. Ներկայացնելով թիվ ԱՐԴ/2250/02/16 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողները նշում են, որ 2001 թվականի հունիսի 15-ին ուժը կորցրած ՀՀ հողային օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) «Հողերը հատկացնելու կարգը» վերտառությամբ 13-րդ հոդվածը հակասում է Սահմանադրության 29-րդ հոդվածին, քանի որ այն կարգավորում է միայն գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ

տնտեսությունները վարելու նպատակով որպես սեփականություն հողամասեր հատկացնելու հարցը՝ չկարգավորելով քաղաքներում և քաղաքատիպ ավաններում որպես սեփականություն հողամասեր հատկացնելու հարցը, հետևաբար՝ խտրականություն է դրվում ՀՀ քաղաքացիների սոցիալական ծագման մեջ, որը Սահմանադրությամբ արգելվում է:

Դիմողները գտնում են, որ Օրենսգրքի՝ «Բնակարանային շինարարության համար քաղաքացիներին հողամասեր հատկացնելը» վերտառությամբ 44-րդ հոդվածը հակասում է Սահմանադրության 79-րդ հոդվածին, քանի որ «ՀՀ քաղաքացիներ» նշումով հստակ չի սահմանվում ընտանիքի անդամների՝ քաղաքներում և քաղաքատիպ ավաններում բնակելի տան կառուցման նպատակով հողամասերը որպես սեփականություն ստանալու իրավունքը: Ըստ Դիմողների՝ նման պայմաններում սահմանափակվում է ընտանիքի անդամների՝ որպես սեփականություն բնակելի տուն կառուցելու նպատակով հողամասեր ստանալու իրավունքը: Մինչդեռ Դիմողների պնդմամբ՝ «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում է, որ տվյալ օրենքով նախատեսված կարգով յուրաքանչյուր ընտանիք (ծուխ) իրավունք ունի որպես սեփականություն ստանալու հողամաս:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված **այլ դեպքերում**:*

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, **երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է**:*

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «(...) *անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, **երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է**: (...) անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար*»:

Սահմանադրական դատարանը վերը նշված՝ ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է, որ «(...) *դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պարճառահեղանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ **դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (...)***»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՌ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ***երթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պարճառահեղանքային կապը, ապա արվյալ դիմումն ակնհայտ անհիմն է**:*

Այս առումով Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման միջև, **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթի (օրինադրույթների) և ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ:**

Վերը ներկայացված դրույթներով ամրագրված կարգավորումները, Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանը հանգում է հետևյալ եզրակացության.

Այսպես՝ Դիմողներն իրենց դիմումում խնդրել են որոշել Օրենսգրքի 13-րդ հոդվածի համապատասխանությունը Սահմանադրության 29-րդ հոդվածին, ինչպես նաև Օրենսգրքի 44-րդ հոդվածի համապատասխանությունը Սահմանադրության 79-րդ հոդվածին, սակայն **չեն ներկայացրել որևէ հիմնավորում նշված հոդվածների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ:** Մասնավորապես՝ Դիմողները ներկայացրել են Սահմանադրության 29-րդ հոդվածով երաշխավորված խտրականության արգելքի, ինչպես նաև Սահմանադրության 79-րդ հոդվածով երաշխավորված իրավական որոշակիության սկզբունքների խախտման վերաբերյալ պնդումներ, սակայն **բավարար կերպով իրավաբանորեն չեն հիմնավորել իրենց որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման փաստը, հետևաբար և՛ տվյալ փաստի և Օրենսգրքի 13-րդ, ինչպես նաև 44-րդ հոդվածների միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը:**

Ավելին՝ Դիմողները սահմանափակվել են քննարկվող համատեքստում օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով սահմանված համապատասխան իրավա-

կարգավորումների սուկ վկայակոչմամբ՝ չհիմնավորելով դրանց և իրենց կողմից բարձրացված հարցի ընդհանրությունը, նշված իրավակարգավորումների կիրառելիությունը՝ սույն կոնկրետ գործի հանգամանքների հաշվառմամբ:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Դիմողների կողմից վկայակոչված՝ Սահմանադրության՝ խտրականության արգելքի սկզբունքը սահմանող 29-րդ, ինչպես նաև իրավական որոշակիության սկզբունքը սահմանող 79-րդ հոդվածների բովանդակությունից բխում է, որ **դրանք ինքնին չեն կարող դառնալ առանձին քննարկման առարկա, այլ կարող են դիտարկվել միայն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության սահմանափակման լույսի ներքո: Մինչդեռ, սույն պարագայում Դիմողների կողմից բարձրացվել է Օրենսգրքի 13-րդ հոդվածի՝ Սահմանադրության միայն 29-րդ հոդվածին, ինչպես նաև Օրենսգրքի 44-րդ հոդվածի՝ Սահմանադրության միայն 79-րդ հոդվածին համապատասխանության հարց:**

Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 12-ի ՍԴԱՌ-126 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. *«(...) անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և հիմնավորի վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության անմիջական պատճառահետևանքային կապը: Այլ կերպ ասած՝ վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրաիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրաիրավական իմաստով չի կարող անհատական գանգառարկման առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման»:*

Այսպիսով, Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ անհատական դիմումի շրջանակում նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում **անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման, որն այս պարագայում տեղի չի ունեցել: Մասնավորապես՝ Դիմողները բարձրացրել են Օրենսգրքի 13-րդ հոդվածի՝ Սահմանադրության միայն 29-րդ հոդվածով երաշխավորված՝ խտրականության արգելքի սկզբունքին, ինչպես նաև Օրենսգրքի 44-րդ հոդվածի՝ Սահմանադրության միայն 79-րդ հոդվածով երաշխավորված իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանության հարց:**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Էմիլյա Գևորգյանի, Էդգար Գևորգյանի և Վահե Գևորգյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ հողային օրենսգրքի (ուժը կորցրել է 15.06.2001 թ.) 13-րդ և 44-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

16 մայիսի 2023 թվականի
ՍԴԱՈ-46